

ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 10

Վիճակագրության պետական խորհրդի նիստի

06.09.2004թ.

ժ. 11.00

Մասնակցում էին՝

Ս. Մնացականյան (*խորհրդի նախագահ*), Գ. Գևորգյան, Վ. Դավթյան, Յու. Պողոսյան, Վ. Դանիելյան (*խորհրդի անդամներ*), Գ. Գյուրջյան (*խորհրդի քարտուղար*)

Հրավիրված էին՝

Վ. Սարոյան (*Իրավաբանական բաժնի պետ*),

Օրակարգի նախագծում` մեկ հարց.

1. Հայաստանում Արժույթի միջազգային հիմնադրամի մշտական ներկայացուցիչ Ջեյմս Մաքհյուի կողմից ներկայացված ձեռնարկությունների մակարդակով տեղեկատվություն ստանալու վերաբերյալ հայցի մասին.

/Ձեկուցող՝ Ս. Մնացականյան/

ՀՀ Վիճակագրության պետական խորհրդի նախագահի կողմից ներկայացվեց խորհրդի նիստի օրակարգի նախագիծը, որը հաստատվեց ամբողջությամբ և միաձայն:

/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Լսեցին՝

1. Հայաստանում Արժույթի միջազգային հիմնադրամի մշտական ներկայացուցիչ Ջեյմս Մաքհյուի կողմից ներկայացված ձեռնարկությունների մակարդակով տեղեկատվություն ստանալու վերաբերյալ հայցի մասին.

/Ձեկուցող՝ Ս. Մնացականյան/

Որոշեցին՝

1. Զննարկելով Ջեյմս Մաքհյուի 12.08.2004թ. գրության մեջ ներկայացված հայցը և հանգելով այն եզրակացության, որ հայցվող, ժամանակային և արժեքային կտրվածքներով, տեղեկատվությունը հնարավորություն է ընձեռում անհատական տվյալների գաղտնագերծման, ինչն «Պետական վիճակագրության մասին» ՀՀ օրենքով սահմանված վիճակագրական գաղտնիք է և կհանգեցնի օրենքի խախտման` մերժել տեղեկատվության տրամադրումը:

2. Տրամադրել «Արդյունաբերական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներն` ըստ աշխատողների թվաքանակով որոշվող չափերի և տնտեսական գործունեության երկնիշ դասակարգման» վիճակագրական տեղեկագրի էլեկտրոնային տարբերակը` 2001-2003թթ. տարեկան տվյալներով:

/Արձանագրային/

/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Նախագահ

Ս. Մնացականյան

Քարտուղար

Գ. Գյուրջյան